

ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՇՐՋԱՆ՝ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԵՐԵՔ ԳԻՒՂԵՐՈՒ ՄԷՋ

Լիբանանեան բանակը յստակացուց, որ հարաւի մէջ սկսած է քայլերու ձեռնարկել՝ մուտք գործելու համար այն շրջանները, ուրկէ պետք է քաշուին իսրայէլացի զինուորները: Լիբանանեան բանակի խումբերուն կ'ընկերակցին բանակային ճարտարապետներ, որոնք պիտի ստանձնեն ճամբաները բանալու եւ վտանգները վնասագործելու պարտականութիւնը: Միացեալ Նահանգներու Արտաքին գործերու նախարարութիւնը երեկ յայտարարեց, թէ զինադադարի փորձառական շրջանը սկսած է գործադրուիլ հարաւային երեք բնակավայրերու մէջ՝ հիմնուելով եռակողմանի շրջագծային համաձայնութեան որոշումին եւ մշազգային համակարգող խմբակի հովանաւորութեան վրայ: Ըստ այս ծրագրին, իսրայէլեան ուժերը պետք է դուրս գան բռնա-



գրաւած Ֆրուն, Սրիֆա եւ Արեւմտեան Չաութար գիւղերէն, որպէսզի այնտեղ տեղակայուին լիբանանեան բանակի զինուորները եւ արգիլեն զինեալ ապօրինի խմբաւորութիւններուն գործունեութիւնը: Ծրագրի յաջողութեան պարագային, նախատեսուած է ընդլայնել փորձառական շրջանը՝ ներառելով բռնագրաւեալ յաւելեալ բնակավայրեր: Ըստ ամերիկեան յայտարարութեան, այս իրագործումին կարելի եղած է յանգիլ Զոմմի մէջ անցեալ շաբաթ տեղի ունեցած լիբանանեան-իսրայէլեան ուղղակի բանակցութիւններուն շնորհիւ, խոստանալով շարունակաբար աշխատիլ երկու կողմերուն հետ՝ վերջնական կայունութիւն հաստատելու համար: Նշենք, որ միաժամանակ իսրայէլեան գործողութիւնները կը շարունակուին մնացեալ քանի մը տասնեակ բռնագրաւեալ գիւղերուն մէջ, ուր կը քանդուին յաւելեալ բնակարաններ ու այլ կառոյցներ: Նման պայթումներ երբէ որոտացին Թայպէ եւ Զֆարըձակիթ ռազմավարական շրջաններէն:

ԱՅՍՈՐ ԱՌԻՆ-ԹՐԱՄՓ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆ

Հանրապետութեան նախագահ ժողէֆ Աուն կը շարունակէ իր ամերիկեան այցելութիւնը եւ այսօր պիտի տեսակցի իր ամերիկացի պաշտօնակից Տոնըլտ Թրամփի հետ: Իր պաշտօնական ժողովներու ծիրին մէջ, Աուն տեսակցեալ ամերիկացի արտաքին գործերու նախարար Մարքո Ռուպիոյի հետ, քննարկեց տարածաշրջանային զարգացումները, Լիբանանի վիճակը, խաղաղութեան յանգելու ջանքերը եւ երկկողմանի յարաբերութիւնները: Նախագահը կոչ ուղղեց վերաշխուժացնելու ամերիկեան հովանաւորութեամբ կնքուած շրջագծային փոխըմբռնումը՝ առաջին հերթին



յաջողցնելով փորձառական երեք շրջաններ իսրայէլեան ամբողջական նահանջը: Ան աջակցութիւն խնդրեց նաեւ զէնքի մենաշնորհի ծրագիրը իրականացնելու համար: Ռուպիո իր կարգին դրուատեց Աունի քաղաքականութիւնները եւ վստահեցուց, որ Թրամփի հետ անոր տեսակցութիւնը պիտի ըլլայ շատ յաջող: Ան շեշտեց, որ Լիբանան չի կրնար ենթակայ ըլլալ բանակցային մէկ այլ ուղեգիծի, որովհետեւ երկրին գերիշխանութիւնը կը պահպանուի միայն լիբանանեան որոշումով: Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի յայտնեց, որ նախագահին հետ խօսած է ճամբորդութենէն առաջ ու վերստին շեշտած զինադադարը վերականգնելու եւ բռնագրաւեալ շրջաններէն իսրայէլեան նահանջը իրականացնելու կարեւորութիւնը: Հանրապետութեան նախագահութիւնը յայտնեց, որ Աուն Սեուական Երաբիհայ այցելելու մասին հրաւեր մը ստացած է գահաժառանգ իշխան Սոհամմատ պըն Սըլմանէն, մինչ Ռիատ վերահաստատած է իր ամբողջական աջակցութիւնը Լիբանանին:

ՄԱԳԼՅՈՂԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ՅԱՆՈՒՆ ԱՆՀԵՏ ԿՈՐՍՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Հայ-ատրպէյճանական հակամարտութեան տարիներէն իվեր անհետ կորսուածներուն հարազատները իրենց հերթական հաւաքը կազմակերպեցին կառավարութեան շէնքին առջեւ, ուր բողոքեցին իրենց զաւակներուն ճակատագիրը բացայայտելու եւ զանոնք տուն վերադարձնելու հարցի ձգձգումէն: Բողոքողները կառավարութեան շաբաթ մը պայմանաժամ տուին՝ անհետ կորսուածներուն վերաբերեալ



քայլերու ձեռնարկելու համար, սպառնալով հակառակ պարագային դիմելու վճռական քայլերու: Անոնք նշեցին, որ կը մտադրեն սպիտակ դրօշ բարձրացուցած ուղղուիլ հայ-ատրպէյճանական սահմանային Հաքարի կամուրջ՝ պահանջելու համար իրենց հարազատներուն մասին տեղեկութիւններ: Բողոքող մայրերէն ոմանք նշեցին, թէ իրենց զաւակները տեսած են ատրպէյճանական հեռատեսիլի կայաններէն, շեշտելով որ իրենց պետք է այս խաղաղութիւնը, այլ՝ իրենց երեխաները:

ԲԱՆՏԵՆ ՈՐԵՐՁ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Պաքուի մէջ բանտարկուած հայ գերիներէն՝ Պաշտպանութեան բանակի զօրավար Դաւիթ Մանուկեան յոյժ ուղեծ մը, որուն մէջ շեշտեց, որ իրենց դիմագրաւած դատական հոլովոյթը ուղղուած է ոչ միայն գերիներուն, այլեւ հայ ժողովուրդի անցեալին ու ներկային, որովհետեւ մեղադրանքը կը սկսի 20-րդ դարու սկիզբներէն: «Մենք կը շարունակենք մեր արդար պայքարը՝ չթոյլատրելով նուաստացնել հայ ժողովուրդին ու պետականութիւնը», ըսաւ ան, վարչապետ Նիկոլ Փաշինեանը յորդորելով մեղադրանքներուն մասին հանրայնացնելու իր դիրքորոշումը, այլապէս պիտի համարուի, որ ինք եւս համաձայն է ատրպէյճանական կեղծ մեղադրանքներուն: «Ցաւալի է, որ բանտին մէջ գտնուողները չեն գգար Հայաստանի Հանրապետութեան շունչը», բողոքեց Դաւիթ Մանուկեան:

ԾԱՌՈՒԿԵԱՆԵՆ ԱՌԳՐԱՌՈՒԾ ԷԱԿՆԵՐԸ

Երեւանի կենդանաբանական այգին յայտարարեց, թէ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանի առաջնձնատունէն առգրաւուած է



այգի փոխադրուած է երեք առիծ, չորս վագր, 9 կոկորդիլոս եւ 13 կարապ: Յիշեցնենք, որ Ազգային անվտանգութեան ծառայութիւնը Ծառուկեանի բնակարանն ու անոր պատկանող հաստատութիւնները առաջին անգամ խուզարկեց 6 Յուլիսին, Նոյն օրն ալ զինք ձերբակալեց եւ փոխադրեց կալանավայր:

ԱԶՆԻՒ ՈՒ
ԳՐԱՍԷ՛Ր ՀԱՅՈՐԴԻ,
ԿԱՐԴԱ՛, ՏԱՐԱԾԷ՛
ՀԱՅ ԹԵՐԹԸ

KAITIAKITANGA՝ ԱՇԽԱՐՀԻ ԱՍԵՆԱԳԵՂԵՑԻԿ ԲԱՈԸ

Նիւ Զելանտայի տեղաբնիկ Մաուրի ժողովուրդին գործածած բառերէն մէկը լեզուներ սորվելու համացանցային Babel հարթակին նախածեռնութեամբ ընտրուեցաւ որպէս «Աշխարհի ամենագեղեցիկ բառը»: Հիմնուելով առցանց քննարկումներու եզրակացութիւններուն վրայ, հարթակը թեկնածու բառերուն ցանկը ներկայացուց միջազգային դատակազմի մը, որուն մաս կը կազմեն լեզուաբաններ, մտաւորականներ եւ մշակութային մասնագէտներ: Ի վերջոյ, Նիւ Զելանտայի Մաուրի տեղաբնիկներուն գործածած Kaitiakitanga բառը ընտրուեցաւ որպէս ամենագեղեցիկը՝ իր հնչեղութեան եւ իւրայատկութեան համար: Ան կը նշանակէ՝ բնապահպանական պատասխանատուութիւն յանուն յաջորդ սերունդներուն:

ԵՐԿԱՐԱՏԵՒ ՉԻՆԱԴԱԴԱՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՐՃ ՉԻՆԱԴԱԴԱՐ

«Ռոյթթըրզ» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Միացեալ Նահանգներու եւ Իրանի միջեւ աշխուժացող միջնորդները Թեհրանին փոխանցած են 10 օր զինադադար յայտարարելու առաջարկ մը, որպէսզի կարելի ըլլայ քննարկել նախապէս ստորագրուած յուշագրի գործադրութեան վերադառնալու հնարաւորութիւնը: Բանակցութիւնները շարունակելու կոչերուն զուգահեռ, շաբաթավերջին չդադրեցան փոխադարձ յարձակումներն ու վերստին նուազագոյնի նահանջեց Զորմուզի նեղուցը հատող նաւերուն թիւը: Ամերիկեան ռազմական օդանաւերը քանի մը անգամ թիրախներ հարուածեցին Թեհրանի, Շիրազի, Իսֆահանի, Պուշահըրի եւ շարք մը այլ շրջաններու մէջ: Իրան հակադարձեց հրթիռակոծելով արաբ հարեւանները՝ այնտեղ տեղակայուած ամերիկեան դիրքերը թիրախաւորելու պատճառաբանութեամբ: Իրանի հրթիռներն ու անօդաչու սարքերը ինկան Պահրէյնի, Զուէյթի, Զաթարի, Յորդանանի եւ Իրաքի Զիւրտիստան գաւառին վրայ: Ամերիկեան կեդրոնական հրամանատարութիւնը յայտնեց, թէ երկու զինուոր մահացած է Յորդանանի մէջ, երրորդ մըն ալ՝ Իրաքի, մինչ քանի մը զինուոր վիրաւորուած է եւ մէկ հոգի՝ անհետ կորսուած: Պահրէյնի Արտաքին գործերու նախարարութիւնը միջազգային ըստանիքէն պահանջեց վերջ դնել Իրանի թշնամական արարքներուն: Իրանի նախագահ Մասուտ Փեզէշքեան ահազանգեց, թէ պատերազմական դրութեան պատճառով երկիրը այլեւս կարելի չէ տնօրինել սովորական միջոցներով: «Տնտեսութիւնն ու քաղաքացիներուն ապրուստը գործողութիւններու ամենէն կարեւոր հրապարակ են», ըսաւ ան, զգուշացնելով «տնտեսական ճնշումներէն, որոնք կրնան նսեմացնել ռազմական յաղթանակները, եթէ ընդարձակուի ընկերային դժգոհութիւնը»: Իսկ Արտաքին գործերու նախարարութեան բանքեր Իսմայէլ Պաքայի նշեց, որ իր երկրին դէմ ամերիկեան հարուածները կը յիշեցնեն «Իսլամական պետութիւն» կազմակերպութեան ահաբեկչական գործողութիւնները: Անոր համաձայն, ցամաքային գործողութիւն մը սկսելու պարագային, ամերիկացիները դէմ-յանդիման պիտի գան իրանցիներու «չերմ ընդունելութեան»:

ԿՈԿՈՐԴԻԼՈՍՆԵՐԸ՝ ԲԱՆՏԻ ՊԱՇՏԱԿՆԵՐ

Իսրայէլեան լրատուամիջոցներ նշեցին, թէ բանտային իշխանութիւնը կը մտադրէ կոկորդիլոսներ արծակել շարք մը բանտերու շուրջ՝ արգելափակուածները աւելի խիստ պայմաններու տակ պահելու նպատակով: Առաջարկը կը պատկանի ազգային անվտանգութեան հարցերու նախարար Իթամար պէն Ղաֆիրին, որ կոչ ուղղած է Նեղոսի կոկորդիլոսներու խիստ վայրի ցեղէն սողուններ արծակելու, մանաւանդ այն բանտերուն շուրջ, ուր արգելափակուած են ազգային անվտանգութեան դէմ յանցագործութիւններու համար դատապարտուածներ (մեծ մասամբ՝ պաղեստինցիներ): Այսուհանդերձ, Պեն Ղաֆիրի առաջարկը քննադատած են բնապահպաններ՝ ներառեալ կենսոլորտի նախարարը, որոնք ահազանգած են նման վտանգաւոր անասուններ քաղաքներէն ոչ շատ հեռու վայրերու մէջ արծակելու հնարաւոր վտանգներէն:

ՁԱՅՆԵՐ ՊՈԼՍԷՆ (արձագանգ ԹրքաՀայ Կեանքի) - 4

ՊՈԼՍՈՑ Գարակեօգեան վարժարանի տարեփակի շրջանաւարտից հանդէսը տեղի ունեցած է 1 Յուլիսին: Տնօրէնուհի Նարոտ-Վերոնիք Գուրուղօղլու իր բարեմաղթանքներն ու յորդորները յղած է ուսանողներուն: Սրտի խօսք արտասանած է Խնամակալութեան ատենապետը՝ Արթին Քիլճի: Ընթացաւարտ աշակերտները հրամցուցած են երգերու փունջ մը, իսկ ոմանք ալ հրաժեշտի ուղերձներ կարդացած են 5 լեզուներով՝ հայերէն, թրքերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ սլաւերէն... : Վկայականաց բաշխումին զուգահեռ՝ մրցանակներ յանձնուած են յառաջադէմ աշակերտներու: Յաջորդած է խնձոյց մը դպրոցին պարտեզը, երաժշտութեան ինկերակցութեամբ: Շրջանաւարտից հանդէսներով իրենց կրթական տարին փակած են նաեւ **ՖԵՐԻԳԻՂԻ** Մերամբեթեան եւ **ԵՇԻԼԳԻՂԻ** ազգային վարժարանները, որոնց ընթացաւարտ աշակերտները իրենց վկայականները ստացած են ձեռամբ իրենց տնօրէնուհիներուն՝ Մարալ Եօզտադի եւ Տիլարա Շապօեանի:

(Հարունակութիւնը տեսնել էջ 2)



ՎԻՐԱՒՈՐ ԿՂԶԻՆ

ԱՄԵՏԻՍ ՈԱԶՄԻԿ (Նիկոսիա)

Ամեն տարի, 20 Յուլիսին, սովորական զարթուցիչով չէ որ կ'արթնան կիարացիք: Յուլիսի այդ օրուն արշալոյսը չի նմանիր աշխարհի միւս երկիրներու ջերմ ու բարի արշալոյսներուն: Տարբեր ու մշայլ է ան կիարացիներուն համար: Սէտով երիզուած է կիարական օրացոյցներուն վրայ: Անշուշտ, խօսքը կը վերաբերի ոչ-թուրք կիարացիներուն:

20 Յուլիսի այգաբացին, ռազմական ահագանգեր, սարսուռ առթող արծագանգով կը վերլիշեցնեն թէ կոզին վիրաւոր է տակաւին:

Արդարեւ, 52 տարի առաջ, միջազգային լուրերու կիզակետը Կիարոսն էր. կը հողովուրէր անուն մը՝ «Աթիլլա» ռազմական գործողութիւն: Օսմանեան ծաւալապաշտ ոգին իր նախայարձակ դրսեւորումը կ'ունենար արդէն նոր տարագով եւ «քաղաքակիրթ»ի քղափոխով: Արդէն տարիներէ իվեր կոզին թատերաբեմ էր ներհամայնքային խլրտումներու. կարգ մը պետութեանց համար (Անգլիա, Յունաստան, Թուրքիա) ան կռուախնձոր մըն էր, ուր յաճախ կ'իյնային զոհեր, կ'արձանագրուէին զինեալ բախումներ եւ քաղաքական կեանքի մագլցումներ: Իրերամերժ հակադիր բեւեռները՝ ազգային շէշտակի գունաւորումով (յունական-



թրքական), կը հետապնդէին ներհակ նպատակներ: Ծայրայեղականութիւնն ու մոլեռանդութիւնը հասան բարձրակետի մը, երբ կոզին իր բնակչութեամբ զոհը դարձաւ անսանձելի ատելութեան եւ արտաքին ուժերու կոպիտ միջամտութեանց: Յոյն-կիարացիներու Էնոսիսը («Միացում» Յունաստանի հետ) եւ թուրք-կիարացիներու Թաքսիմը («Բաժանում» Կիարոսի յոյներէն) չարամտօրէն օգտագործուելով Անքարայի կողմէ, ինքզինք արտօնեց օր ցերեկով ներխուժելու Կիարոս, գրաւելու անոր 36 առ հարիւրը, վիթխարի բանակ կազմակերպելու հոն, միջամուխ ըլլալու անոր ներքին գործերուն, ապա՝ ինքնակոչ հանրապետութիւն հռչակելու ՝ խոր վիհ մը բանալով երկրի բնակիչներուն միջեւ:

Ծանր պահեր ապրեցաւ Կիարոսի ժողովուրդը: 1974 Յուլիս 20-էն ետք, Օգոստոսի կիսուն, թրքական զօրքեր, վստահ ըլլալով որ դիմադրութեան պիտի չհանդիպէին, շարունակեցին իրենց յառաջխաղացքը, դատարկել տուին շէն ու կենսալիւնդ Ֆամակուսթա ծովափնեայ քաղաքը եւ ըստ իրենց հայեցողութեան սահմանագիծ մը որոշեցին հիւսիսի եւ հարաւի միջեւ: Կիսուած էր կոզին, աւելի քան երեք հազար զոհեր, 1400 անհետ կորուսածներ. տնաւեր ու բնագուրկ գաղթականներ ցրուեցան հարաւ՝ յունական բաժնին մէջ: Օսմանեան աղետ մըն էր, որ խորշակի նման եկաւ ու աւերեց: Աւելին՝ միջազգային ակոյծ կնճիռներու երկար ցանկին աւելցաւ կիարական թնճուկն ալ, ուր ուղղուեցան ՄԱԿ-ի զօրքեր՝ զսպելու համար հաւանական նոր արիւնահեղութիւններ կամ սանձեղն յաճախակի ընդհարումները, որոնք կը պատահէին փշաթելելով բաժնուած հակոտնեայ կողմերուն միջեւ:

Տազնապը առ այսօր կը մնայ առկալի: Բոլոր կողմերուն համար ընդունելի լուծման տարբերակի չգոյութեան պատճառով, բազմաթիւ ծրագրեր կը մնան բարձիրթողի: Անքարայի յաւակնոտ եւ յոխորտալից քաղաքականութիւնը իսկական խոչընդոտ մըն է կոզին կացութեան բարելաւման, տնտեսական բարօրութեան եւ փոխվստահութեան ստեղծումին: 52 տարիներէ կիսուած կոզին եւ անոր մայրաքաղաքը պերճախօս վկայութիւններ են, որ եթէ թրքական կողմը տէր է ռազմական գերակշռութեան, հոն չկայ երկխօսութեան եւ փոխհասկացողութեան նշոյլն անգամ:

Երկատուած Նիկոսիոյ յունական բաժնին մէջ բարձունք մը կայ Թիմօ անուկով (կը նշանակէ բլուր), որուն վրայ թառած է հաւաքական ընդարձակ գերեզմանոց մը. հոն կը տեսնենք բազմաշարք սպիտակաքար դամբաններ: Շուրջբոլորը շիրմաքարեր՝ սիրտ ու հոգի լկկոյ: Մշայլ միջավայր մը՝ ներաշխարհի դրոկող: Երիտասարդ դէմքերու լուսանկարներ, զինուորականի տարագներով, կը յառեն դէպի երկնքի արջայութիւն: Սպաննուած, կիսատ մնացած երագներու տէր մարդկանց հաւաքական ննջավայր, ուր կարելի չէ դեգերիլ անոնց աղի արցունքներու, արդար գայրոյթի եւ ներքին ցասումի: Ձեւով մը կիպրական Եռաբլուր մը Նիկոսիոյ սիրտին: Դիմացդ կը նայիս, յանցագործ պետութեանց երկու խոշորկէկ դրօշները կը ծածկեն հսկայ լերան լանջը եւ կարծեք նենգօրէն կը յուշեն տակաւին իրենց բռնի ներկայութեան փաստը: Նողկալի պատկեր մը անտարակոյս, որ 1974-ի վայրագութենէն չյագեցած, դեռեւս կը մնայ կառչած իր վաղեմի քաղաքականութեան:


Յամբօրէն կը քալես շիրիմներուն առջեւէն, ընթերցելով կիպրացի նահատակ զինուորներուն անունները: Բանակային տարբեր աստիճաններ ունէին անոնք 1974-ին եւ ահա Անքարայի յղացած եւ գործադրած «Աթիլլա» գործողութեան հետեւանքով, ամփոփուած են ափ մը հողի տակ: Շիրիմներուն վրայ արձանագրուած ՝ «Էփես»... ինկաւ: Արդարեւ, հերոսները չեն մահանար, այլ կ'իյնան քաջաբար: Ինկան անոնք՝ Թիմփոյի քաջերը, յանուն հայրենիքի պաշտպանութեան եւ օսմանեան արիւնասեր թաթը զսպելու ընթացքին: Յազարներ են անոնք՝ որոնք ինկաւ:

Անուններ, անուններ: Երիտասարդ ու վարդ կեանքեր՝ խլուած անժամանակ: Զանի՝քանի՝ քանդուած օճախներ կան այդ շիրիմներուն ներքեւ: Զանի՝քանի՝ կանթեղներ մարեցան վաղաժամօրէն: Ինկան անոնք:

«ԱՄԱՌ ԱՌԱՆՅ ԱՅԳԱԲԱՅԻ»

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝ ՅԱԿՈԲ ԽԱԶԻԿԵԱՆ

ԵՒ ԺԱՆ-ԻՎ ՍՈՒՍԻ (ՄԱՍ Բ.)



Վարդան Պալեան Կ. Պոլսոյ մէջ թրքական բանակ կը մտնէ որպէս բժիշկ-դեղագործ: Անոր քաղաքական հայեացքներուն հակառակ երեւոյթներ շատ կը վորդվեցնեն զայն, ինչպէս Էսկէրի եւ Թալաթի մեծ ազդեցութիւնը կառավարութեան վրայ: Ընտանեկան պատճառներով ան Սեբաստիա կը վերադառնայ իր կնոջ՝ Մարոյի եւ զակնին՝ Թովմասի մօտ:

Թուրքերուն եւ քիւրտերուն ձեռքով Սեբաստիոյ մէջ կատարուող անօրէնութիւններուն պատճառով Մարօ սաստիկ մտահոգ էր: Երբ ան իր մտատանջութիւնը ամուսնոյն կը յայտնէ, վերջինս կը հանդարտեցնէ զայն ըսելով, թէ տեղահանութեան որոշումը չի կիրարկուիր զինուորականներուն եւ անոնց ընտանիքներուն նկատմամբ:

Քաղաքին երեւելիները Սուրբ Միհաս եկեղեցին կը հաւաքուին ընկելու համար կացութիւնը եւ տեղահանութեան սպառնալիքը: Ներկաներէն յեղափոխական Շիրակ Թեոնեանը կողմակից էր զինեալ պայքարի գաղափարին, սակայն ժողովականներուն մեծամասնութիւնը հակառակ էր: Երբ ժողովը վերջ կը գտնէ եւ պատարագը կը սկսի, ետեւի շարքերէն ազգային մը կը նկատէ, թէ թուրք ոստիկանները կը շրջապատեն եկեղեցին: Ոստիկանութիւնը իմացած էր, թէ զինեալներ կը գտնուէին եկեղեցիին մէջ: Իսկոյն ժողովուրդին մէջ իրարանցում տեղի կ'ունենայ: Եկեղեցին գտնուողները արագ քայլերով դուրս կու գան: Ոստիկանութիւնը 15 հայ երիտասարդներ կը ձերբակալէ: Շիրակի մարդոց եւ ոստիկանութեան միջեւ հրացանածգութիւն կը սկսի: Թուրքերը եկեղեցին կրակի կու տան եւ հայ դիմադրողները ստիպուած դուրս կու գան ու կը յանձնուին:

ԶԱՅՆԵՐ ՊՈԼՍԷՆ

(Շարունակուած էջ 1-էն)

ՄԱՐՄԱՐԱ ՇՈՎՈՒ ՄԵԾ

Կոզիի մշակութային հիւսմէնի կեդրոններէ մէկուն մէջ (Թաշ Մեքէպ), 11 Յուլիսին, երգչուհի Մարալ Այվազ հանդէս եկած է համերգով մը:



Իսթանպուլի մայր քաղաքապետութեան նախաձեռնութեամբ: Երաժշտական երեկոն մաս կազմած է կոզին վրայ սարքուած «Շովեգերեայ համերգեր» շարքին: «Մարմարա» օրաթերթը ակնարկելով այս համերգին կը գրէ, որ «մեղեդիները որոնք հնչեցին պատմական շէնքին տպաւորիչ մթնոլորտին մէջ, հանդիսատեսը առաջնորդեցին դէպի Անատոլիոյ բազմադարեան մշակութային յիշողութեան մէջ խորհրդանշական ճամբորդութեան մը: Երեկոն վերածուեցաւ տարբեր լեզուներու, մշակոյթներու եւ երաժշտական ասանդութիւններու գեղեցիկ համադրութեան»: Մարալ Այվազին ընկերակցած է Արի Յերկէլի կողմէ դեկավարուող հնգանդամ նուագախումբ մը: Երգչուհին մեկնաբանած է մասնաւորաբար արեւելեան ու հարաւարեւելեան Անատոլիոյ ժողովրդական երգեր, նաեւ՝ հայերէն կտորներ: Շարք մը երգեր նախ հնչած են հայերէնով, ապա շարունակուած կամ աւարտած են թրքերէն բառերով. որպէս տուեալ տարածաշրջանի մշակութային բնական հաղորդակցութեան արտայայտութիւն: Եւ ասիկա շա՛տ գնահատուած է ներկաներուն կողմէ: «Մարմարա»-ն այս մասին ալ կը գրէ, որ «համերգին գլխաւոր պատգամը այն էր՝ որ Անատոլիոյ երաժշտական ժառանգութիւնը միակ ժողովուրդի մը սեփականութիւնը չէ, այլ արդիւնքն է դարբերու ընթացքին հայերու, թուրքերու, յոյներու, քիւրտերու եւ այդ հողերուն վրայ ապրած այլ ժողովուրդներու համատեղ մշակութային աւանդին»: Համերգի վերջին բաժնով՝ բոլոր ներկաները ծայնակցած են երգերուն, իսկ բակին մէջ կազմուած են ինքնաբոլի պարաշարքեր... Երեկոն վերածելով իսկական ժողովրդական տօնախմբութեան մը:

ՍԿԻՏԱՐԻ Ս. Կարապետ

Եկեղեցին, որ վերանորոգութեան աշխատանքներէ ետք վերաբացած էր իր դռները վերջերս, Ս. Պատարագի անդրանիկ մատուցմամբ դարձեալ իր սիրելի տեղը գրաւած է պոլսահայ հաւատացեալներու սրտին մէջ: Վարդավառի Կիրակին (12 Յուլիս), որ արդէն եկեղեցւոյ անուանակոչութեան աւանդական օրն է, ոգեւոր մթնոլորտ մը ստեղծուած է այստեղ: Պատարագած ու քարոզած է Թուրքիոյ հայոց պատրիարք Սահակ արք. Մաշալեան: Յընթաց եկեղեցական արարողութեան՝ «Օրինութեան գիր»-ով պատրիարքական գնահատանքի արժանացած է Ս. Փրկիչ ազգ. հիւանդանոցի հոգաբարձուներէ Մկրտիչ Սերժիմշէք, պոլսահայ եկեղեցիներու պատմական գոյքերուն, սրբազան անօթներուն, սրբապատկերներուն եւ մշակութային արժեքներուն նորոգութեան բնագաւառին բերած իր անձնուէր ու երկարամեայ ծառայութեան համար: Նշուած է, որ այս մարգին մէջ արիեստավարժ ու մասնագետ վարպետ մը ըլլալով՝ ներական ոչինչ խնայած է օգտակար ըլլալու համար իր համայնքին: Այնուհետեւ, ներկաները համախմբուած են եկեղեցւոյ բակին մէջ սարքուած Սիրոյ Սեղաններու շուրջ: Հոս, ներկայ եղած է Սկիտարի քաղաքապետը: Յայտագիրը վարած է Թաղային խորհուրդի կազմէն Նուարդ Աւետիքօղլու: Նախ խօսք առած է առեւտրապետ Ռաֆֆի Գրիգորեան, որ տեղեկութիւններ տուած է թաղականութեան վերջին շրջանի իրագործումներուն մասին, որոնց գլխաւորը եղած է եկեղեցւոյ հիմնական վերանորոգութիւնն ու բարեգարդումը: Իրեն յաջորդած է



քաղաքապետ Սանեմ Տետթաշ, որ Վարդավառը բնութագրած է իբրեւ սիրոյ, մաքրութեան եւ առատութեան տօն: Հոսկ բանքը արտասանած է Սահակ պատրիարք, որ անդրադարձումներ ունեցած է Ս. Կարապետ եկեղեցւոյ չորս դարեայ պատմութեան մասին:

ԳՆԱԼԵԻ կոզին, որ ամռան եղանակին պոլսահայ բազմաթիւ ընտանիքներու համար արձակուրդի ցանկալի վայր մըն է, ոգեւոր օր մը ապրած է Կիրակի, 12 Յուլիսին: Վարդավառի առիթով՝ տեղւոյն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պատարագած ու քարոզած է Յարութիւն վրդ. Տամատեան: Եկեղեցին ու շրջափակը լեցուեր են արտակարգօրէն խուռներամ բազմութեամբ: Պատարագի աւարտին հոգեւորականները Անդաստանի արարողութիւն կատարած են բակին մէջ, ապա երկինք արձակուած են սպիտակ արաւնիւներ, որպէս խաղաղութեան եւ եղբայրասիրութեան խորհրդանշիչ: Եկեղեցական արարողութեանց աւարտին տօնական ուրախութիւնը քիչ մը եւս շարունակուած է բակին մէջ՝ Յակոբ Կիւլէի առաջնորդութեամբ հնչած հայկական ժողովրդական երգերով ու ջութի աւանդական ցօղումով:



ՊՈԼԻՍ այցելած է, վերջերս, սփիւռքահայ երիտասարդ պատմաբան Վարդազ Գեթսեմանեան, որ դասախօս է Պէյրութի Ամերիկեան համալսարանի պատմութեան եւ հնագիտութեան ամպիոնէն ներս: Առիթն օգտուելով՝ տեղւոյն «Ժամանակ» օրաթերթը հարցազրոյց մը կատարած է այցելուին հետ: Գեթսեմանեան պատմած է, որ շուրջ ամիս մը Պոլիս մնացէր Է՝ «Սապանճը» համալսարանին հրաւերով, համալսարգելու համար երկու համալսարաններու պատմութեան ամպիոններուն միջեւ գործակցութիւնը: Նոյն «Սապանճը» համալսարանէն ներս ան տուած է նաեւ դասախօսութիւն մըն ալ, Պոլսոյ հայկական եկեղեցիներու առկայ արխիւներուն վերաբերեալ: Գեթսեմանեան, խօսելով Լիբանանի հայութեան մասին, նկատել տուած է որ անիկա քաղաքական, կրթական, մտաւորական, ընկերային ու ընտանեկան առումներով կորսնցուցած է իր երբեմնի կենսունակութիւնը, տուժած է մեծապէս, մասնաւորապէս արտագաղթն ալ թափ ստացած է անկարագրելիօրէն...:



ՊՈԼՍՈՅ «Արաս» հրատարակչատունը, վերջերս, թրքերէնով լոյս ընծայած է թատերական վաստակաւոր գործիչ եւ հեքիաթասաց Սօսի Ճնտոյեան-Այվազի յուշերը. «Կեանք մը՝ լի գրոյցներով» («Պիր հայաթ, սօս սոհպէթ») խորագրին տակ: Գիրքին մէջ, յուշագրողը պատմած է թատրոնի բեմերուն վրայ տասնամեակներ երկարող իր փորձառութիւններուն մասին, հարուստ վկայութիւններով ու շահեկան պատումներով: Ան նշած է, որ ինք Բանկալթըի Միսիրաբեան վարժարանի սանուհի եղած էր ու առաջին անգամ տրամախօսութեան մը մէջ բեմ բարձրացրէր Էր հ'ոն, 1952-ին...: Ու այդ թուականէն սկսեալ իր թատերական «ճամբորդութիւն»-ը բնաւ կանգ չէր առած: Ճնտոյեանի յուշերուն ընդմէջէն կը վերակենդանանայ Պոլսոյ երբեմնի հայկական թատերական ու բեմական կեանքի փայլուն ուրուագիծը՝ բազմաթիւ անմոռալիկ անուններու (Նուպար Թերգեան, Գեորգ Գապառաճեան, Ատրիկէ Տատրեան, Ստեփան Մելիքեան, Նշան Հանչէր, Միսաք Թորոս, Հերման Օզինեան, Արթօ Պերպերեան եւ այլն, եւ այլն) տողանցքով ու ոգեկոչումով:



Կ Ի Ն Ե Ի Թ Ա Գ

«Կեանքի ամենամեծ յաջողութիւնը ոչ թէ բնաւ չիյնալու, այլ ամէն իյնալէ ետք ոտքի կանգնելու մէջ է»:

ԵՐԱՏՕ՝ ԱՐՏԱՇԵՍԵԱՆ ՀԱՐՏԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՄՈՂԻԿԱՆԸ

Այսօր պիտի փորձենք անդրադառնալ հայոց պատմութեան բախտորոշ էջերէն մէկուն, ուր պիտի ծանօթանանք մարող արքայատոհմի մը՝ Արտաշեսեաններու վերջին ժառանգորդ թագուհի Երատոյին:

Շուրջ երկու դար Արտաշեսեանները կերտեցին անկախ եւ հզօր Հայաստան մը, որ իր գագաթնակէտին հասաւ Տիգրան Մեծի օրօք, մինչդեռ Երատոյով այդ փառահեղ գիծը ընդհատեցաւ վերջնականապէս:

Երատօ թագուհի Մեծն Տիգրանի թոռնուհին էր, Արտաշեսեաններու վերջին շառաւիղը: Անոր հեռացումով (12 թ.) խզուեցաւ հայոց պատմութեան հզօրագոյն արքայատոհմի անմիջական ժառանգական գիծը: Մեր պատմութեան մէջ ան եղաւ միակը, որ երբեք անգամ բարձրացաւ հայկական գահին, եւ ամէն անգամ՝ շնորհիւ հայ իշխաններու աջակցութեան, որոնք Արտաշեսեան արեան մէջ կը տեսնէին երկրի օրինական իշխանութեան խորհրդանիշը:



Հայկական դրամագիտութեան մէջ բացառիկ տեղ կը գրաւեն Տիգրան Դ-ի եւ Երատոյի համատեղ հատած դրամները: Զոյր-եղբայր ամուսիններ զոյգը ոչ միայն միացեալ գահակալութեան խորհրդանիշ, այլեւ ձեւով մը ազգային գաղափարախօսութիւնը կ'արտայայտէին: Իրենց շրջանին էր, որ առաջին անգամ պետական դրամին վրայ պատկերուեցաւ Արարատը՝ իր Սիս եւ Մասիս գագաթներով:

Այդ շրջանին, երբ Հռոմ եւ Պարթևստան կը պայքարէին Հայաստանի մէջ իրենց գերիշխանութիւնը հաստատելու համար, Արարատի պատկերումը դրամի վրայ հնչեց որպէս լուռ, բայց յստակ հռչակագիր:

Երատոյի մահէն տասնամեակներ ետք անոր ժառանգները շարունակեցին պայքարիլ հայկական գահին համար: Վրաստանի արքայազն Հրադամիզդ (Երատոյի դստեր որդին) փորձեց ուժով վերատիրանալ մեծ մօր գահին, բայց այդ փորձը, ցաւօք, վերածուեցաւ արիւնոտ ողբերգութեան: Խօսքը կը վերաբերի հին աշխարհի ամէնէն ցնցող սիրոյ, փառասիրութեան եւ դաւաճանութեան պատմութեան, որ հանճարեղօրէն վաւերագրած է հռոմեացի պատմիչ Տացիտոս («Տարեգրութիւններ» (Annales)):

51 թուականին արքայազն Հրադամիզդ դաւադրութեամբ զաւթեց հայոց գահը, բայց հայ աւագանին չհանդուրժեց այդ բռնապետը եւ օգնութեան կանչեց պարթեւները:

Երբ պարթեւներու Վաղարշ Ա. թագաւորն ու անոր եղբայրը՝ Տրդատ, (ապագայ Տրդատ Ա. Արշակունի) մեծաթիւ բանակով մտան Հայաստան, Հրադամիզդի վարձկան զօրքը փախուստի դիմեց, իսկ հայերու մեծաթիւ խումբ մը պաշարեց Արտաշատի պալատը: Հրադամիզդ եւ յդի կիկը՝ Չենուպիա, ստիպուած եղան կէսգիշերին, հեծելագունդի մը ուղեկցութեամբ, հապշտապ փախչիլ դէպի Վրաստանի (Իպերիա) սահմանը:

Չենուպիա թագուհիին յղութեան վերջին շրջանն էր: Երկար եւ արագ ծիսավարութիւնը սպառեց անոր ուժերը եւ ան ծիուն վրայէն սահեցաւ վար: Գիտակցելով իր անյուսալի դրութիւնը եւ չուզելով գերի իյնալ ու ենթարկուիլ նուաստացումի, ան ամուսինին աղերսեց՝ «Ազատե ամօթալի գերութենէն, քու ձեռքովդ սպաննէ գիս»:

Հրադամիզդ ամբողջ Լուսեամբ կը դողար կեանքը կորսնցնելու վախէն, եւ չէր ուզեր գեղեցիկ կիկը բաժին դարձնել օտարին: Ան դաշինով ուժգին հարուածեց Չենուպիայի կուրծքին, ապա մարմինը քաշքշելով հասցուց Արաքս գետի ափը եւ յանձնեց հոսող ջուրերուն:

Սակայն ճակատագիրը որոշած էր Արաքսը գերեզման չդարձնել թագուհիին համար: Գետի հոսանքը անոր մարմինը տարաւ դէպի ծառերով ու եղեգներով հարուստ հանդարտ ափ մը, ուր հայ հովիւներ իրենց ոչխարները կ'արածէին: Տեսնելով ջուրի մակերեսային լողացող շքեղ հանդերձներով կիկը, անոնք անմիջապէս դուրս հանեցին զայն: Չենուպիա կը շնչէր դեռ. ուստի բարեխիղճ հովիւները մաքրեցին անոր վերքը, բուժիչ խոտեր դրին վրան եւ իրենց հազուստներով ծածկեցին անգիտակից թագուհին: Երբ Չենուպիա սթափեցաւ եւ բացայայտեց իր ով ըլլալը, հովիւները հասկցան, որ իրենց առջեւ երկրի թագուհին է: Մեծ յարգանքով, գիւղէ գիւղ փոխադրելով, անոնք Չենուպիան հասցուցին Արտաշատ՝ Տրդատ Ա. արքային մօտ:

Պատմութեան այս դրուագը կը զարմացնէ իր ազնուութեան աստիճանով: Տրդատ, որ դեռ նոր գրաւած էր գահը եւ պատճառներ ուներ ատելու իր թշնամիին կիկը, բացառիկ ազնուութիւն ցուցաբերեց:

Ան հրամայեց արքայավայել պատիւներով ընդունիլ Չենուպիան, անձամբ հոգ տարաւ անոր առողջութեան եւ արտօնեց, որ ապրի հայոց արքունիքին մէջ՝ ապահովելով ծնելիք երեխային անվտանգութիւնը:

Դասական ողբերգութիւն յիշեցնող այս պատմութիւնը գրաւեց երոպացի շատ մը արուեստագետներու ուշադրութիւնը:

Այսպէս, Երատօ թագուհիին կորսուած ժառանգութեան վերջին շառաւիղը՝ Չենուպիա, իր հանգրուանը գտաւ երկրի մը մէջ, որ ատենօք ղեկավարած էր իր մեծ մայրը: Երատոյով գոցուեցան ոչ միայն այդ արքայատոհմին պատմութեան էջերը, այլեւ հսկայ դարաշրջան մը Հայաստանի պատմութեան:

Չենուպիա մարմնաւորեց դժբախտութեան մէջ

յայտնուած, բայց իր արժանապատուութիւնը պահած կնոջ կերպարը, որուն հետագային անդրադարձան Հենտլէ (Օփերա՝ «Ռատամիսթօ», 1720թ.) ինչպէս նաեւ ֆրանսացի եւ իտալացի շատ մը գեղանկարիչներ:

Այսպէս, երբեմն պատմութեան մէջ կարեւորութիւն կը ստանան անհատներ, որոնք կանգնած են ոչ թէ դարաշրջանի մը սկիզբը, այլ վերջաւորութեան: Երատօ եղաւ ոչ միայն վերջին Արտաշեսեանը, այլ վերջին կամուրջը Հայաստանի փառաւոր անցեալի եւ նոր, բայց աւելի բարդ ժամանակաշրջանի միջեւ:



Լուիճի Սապարելլի ԺԸ.-ԺԹ. դար. իտալացի նկարիչ: «Հրադամիզդ կը սպաննէ Չենուպիան»

ԿԼԵՈՓԱԹՐԱ ՊՏՂՈՄԵՈՍԵԱՆ ՀԱՐՏԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻՆ ՄՈՂԻԿԱՆԸ

Այժմ մեր հայեացքը ուղղենք դէպի Միջերկրականի հարաւային ափերը, ուր ականատես պիտի ըլլանք հին աշխարհի մեծագոյն արքայատոհմերէն՝ Պտղոմէոսներու շիջումին, անոնց ամենէն պայծառ աստղ՝ Կլեոփաթա Է-ի բախտորոշ պայքարին՝ մղուած հռոմեական ծաւալապաշտութեան դէմ:

Կլեոփաթա կը մարմնաւորէր Իսիտա աստուածուհին եւ իր իշխանութիւնը հիմնեց մշակութային ու քաղաքական հզօր հիմքի վրայ:

Ինչպէս Արտաշեսեանները, այնպէս ալ Պտղոմէոսները կերտեցին հզօր, հարուստ եւ մշակութային բարձրագոյն արժեքներ ունեցող երկիր մը՝ Եգիպտոսը, որուն փառահեղ պատմութիւնը վերջնականապէս ընդհատեցաւ Կլեոփաթաւով:

Ինչպէս Հայաստանի մէջ Երատօ, այդ առեղծուածային կինը նոյնպէս եղաւ իր տոհմի վերջին շառաւիղը: Կլեոփաթա եղաւ եգպի կին կառավարիչ, որ ստիպուած էր պայքարելու իր գահին համար: Աւելին, ան Պտղոմէոսեան հարստութեան միակ թագուհին էր, որ սորվեցաւ բնիկ ժողովուրդի՝ եգիպտացիներու լեզուն, անոնց համար դառնալով օրինական, աստուածացուած քրմապետ-թագուհի:

Հայկական պղնձադրամներու վրայ Արարատ Երան պատկերման պէս՝ պատմական ու քաղաքական ուրոյն հռչակագիր են նաեւ Կլեոփաթայի հատած դրամները, որոնք վրայ պատկերուած է իր գաւկին՝ Կեսարիոնին (Յուլիոս Կեսարի որդին) հետ եւ կամ՝ Մարկոս Անտոնիոսին հետ համատեղ:

Երբ Հռոմեական հանրապետութիւնը կը վերածուէր ահեղ կայսրութեան եւ կը կլանէր ամբողջ Արեւելքը, Կլեոփաթայի հատած դրամներուն վրայ Եգիպտոսի ինքնիշխանութեան խորհրդանիշներու եւ իր գաւկին պատկերումը կ'ընկալուէր որպէս Հռոմին ուղղուած լուռ, բայց ահագոյն մարտաւիրաւոր: Ան ըսել կ'ուզէր, թէ Եգիպտոսը պատրաստ չէ դառնալու հռոմեական սովորական նահապետ, այլ պիտի պահպանէ իր արքայական արիւնը եւ դարաւոր անկախութիւնը:

Կլեոփաթայի պատմութիւնը Հայոց պատմութեան հետ ունի նաեւ անմիջական եւ արիւնոտ աղետս մը, որ վաւերագրած են հռոմեացի պատմիչները:

Ք.Ա. 34 թուականին, Կլեոփաթայի հոմանիս՝ Մարկոս Անտոնիոս, խաբէութեամբ գերեզմարեց Երատոյի մեծ հայր՝ հայոց արքայ Արտաւազդ Բ.-ը, եւ զայն շղթայակապ տարաւ Ալեքսանդրիա: Անտոնիոս, ի պատիւ Կլեոփաթայի, հռոմեական յաղթահանդետը կազմակերպեց Եգիպտոս, ոչ թէ Հռոմ:

Հայոց վեհաշուք արքային եւ անոր ընտանիքին ստիպեցին «Թագուհիներու Թագուհի» կոչել Կլեոփաթան եւ խոնարհիլ անոր առջեւ: Սակայն Արտաւազդ եւ իր ընտանիքը անգիշխում պահպանեցին իրենց արժանապատուութիւնը, հրաժարելով երկրպագել օտար թագուհիին, ինչի համար ալ, աւելի ուշ, Կլեոփաթա գլխատել տուաւ Արտաւազդը: Այսպիսով, թէ՛ Երատօ, թէ՛ Կլեոփաթա կանգնած էին նոյն հռոմեական ծաւալապաշտութեան ահեղ անիւին տակ, որ կը ծրագրէր ճգմել եւ Արտաշեսեաններու, եւ՛ Պտղոմէոսներու դարաւոր փառքը:

Ճակատագիրը անողոքաբար ցնցող եղաւ Կլեոփաթային համար: Ան ինք եղաւ իր մահուան դատաւորն ու իրագործողը, երբ հասկցաւ, թէ Հռոմի նոր տիրակալ Օկտաւիանոս վճռած էր գինք շղթայակապ պտտցնել Հռոմի փողոցներուն մէջ:

Աքտիումի ծովամարտի պարտութենէն եւ Մարկոս Անտոնիոսի անձնասպանութենէն ետք, Կլեոփաթա պարզապէս պատրանաթափ եղաւ: Ան վստահ էր, որ յաղթանակած Հռոմը չի ինայեր գինք: Գիտէր, որ կեսարին մեծագոյն փափաքն էր գինք ողջ-ողջ տանիլ Հռոմ՝ որպէս ռազմական յաղթահանդետի գլխաւոր աւար եւ «հերոս»:

Կլեոփաթա ընտրեց թագաւորական մահը: Ըստ պատմական աւանդոյթի, հաւատարիմ աղախիննէ-

ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ (ԵՐԵԱՆ)

րը, թուգերով լեցուն կողով մը տարին թագուհիին մօտ, ուր պահուած էր եգիպտական քոպրան: Եգիպտացիները այդ օճը կը համարէին արքայական իշխանութեան եւ աստուածային պաշտպանութեան խորհրդանիշ:

Կլեոփաթա հազաւ իր ամենէն շքեղ արքայական հանդերձները, գլխուն դրաւ թագը եւ պատրաստուեցաւ ընդունելու օճին խայթոցը:

Երբ հռոմեացի զինուորները ներխուժեցին դամբարան, թագուհին, բազմած իր ոսկէ գահին, մեռած էր արդէն:

Այդժամ, հռոմեացի զինուոր մը փրփրած բացազանչեց. «Մի՞թէ լաւ արարք է այս, հարմի՞ո՛ն», իսկ այդ անուան տէր աղախինը պատասխանեց. «Հիասքանչ արարք է, արժանի մեծ թագաւորներու ժառանգին»:

Պատմութիւնը երբեմն ներողամիտ կ'ըլլայ անոնց հանդէպ, որոնք կորսնցուցած են ամէն բան, բայց ոչ իրենց արժանապատուութիւնը... Հռոմի նոր տիրակալ Օգոստոս Կեսար, չյաջողեցաւ կենդանի Կլեոփաթան «ցուցադրել» Հռոմի ժողովուրդին, բայց հրամայեց զայն յուղարկաւորել արքայավայել պատիւներով՝ իր սիրելի Մարկոս Անտոնիոսին քով:

Այսպիսով, Պտղոմէոսեան Եգիպտոսի կորսուած ժառանգութեան վերջին շառաւիղը՝ Կլեոփաթա, իր մահով գուժեց ոչ միայն արքայատոհմի մը աւարտը, այլեւ Հելլենիստական դարաշրջանի վերջնակետը:



Կլեոփաթայի կերպարը դարձաւ համաշխարհային արուեստի ամենաազդու մուսաներէն մին: Անոր կեանքին ու մահուան անդրադարձած են Ուիլիըմ Շեքսպիր, իր հանճարեղ «Անտոնիոս եւ Կլեոփաթա» ողբերգութեամբ, Ճորճ Ֆրիտրիխ Հենտլէ իր հանրայայտ «Յուլիոս Կեսար ի Եգիպտոս» (1724 թ.) օփերայով, ինչպէս նաեւ Վերածնունդի եւ Պարոքի մեծագոյն նկարիչներ՝ Միքելանճելօ*, Կուլիտօ Ռէսի, Ռուպէս, որոնք կտաւին յանձնած են «Կլեոփաթայի մահը օճի խայթոցէն» տրամաթիք տեսարանը:

Պատմութեան մէջ իրենց իւրօրինակ տեղը կը գրաւեն այն անձեր, որոնք վերապահուած է դարաշրջան զոցել: Ե՛ւ Երատօ, ե՛ւ Կլեոփաթա եղան իրենց տոհմերու «վերջին մոհիկանները»:

Անոնք չեղան սկիզբ, բայց եղան ամուր ու աննկուն այն կամուրջը, որ կապեց Հայաստանի ու Եգիպտոսի փառահեղ անցեալը նոր, աւելի բարդ ու դաժան հռոմեական ժամանակաշրջանին:

Անոնց անկումը ոչ թէ տկարութեան, այլ անխուսափելի աշխարհաքաղաքական փոփոխութեան հետեւանք էր, ուր այդ երկուքը հաւասարապէս պահպանեցին իրենց անունն ու թագաւորական պատիւը:

* Այս նկարը Միքելանճելոյի գործն է: Չափը՝ 23.2 x 18.2 սմ, կը գտնուի Ֆլորանս քաղաքի «Քազա Պուոնարոթի» թանգարանը:

ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ ԲԱՏԱՆԻԿ ԱՌԱՋԱՐԿ՝ ԱՅժՄ ԿՐԻՆԱՔ ՕԳՏՈՒՆԻ ՏԱՐԴԱՆՈՒԾԱՐԱՆԻ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԿԷՆ ԳԻՆՈՒ: ՄՏԱՅԷ՝**Ք 50%** ԶԵՂՉ՝ ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ:

Առաւելութիւններ

- Կէս Գին. 50% գեղչ՝ արեան բոլոր քննութիւններուն համար:
- Մատչելի ճառագայթային նկար. 25% գեղչ՝ ճառագայթային նկարի (X-ray) բոլոր ծառայութիւններուն համար:
- Բարձր Որակ. Վստահելի քննութիւններ՝ «Սէն Մարք» (St. Marc) տարրաբաժարաններուն մէջ:

Ինչպէ՞ս Օգտուիլ

- Այցելեցէ՛ք ՀԲԲ-ի դարձնաւտունը:
- Խնդրեցէ՛ք ձեր բժշկական ուղեգիրը:
- Ներկայացուցէ՛ք ՇԽՀԲԲ-ի ուղեգիրը «Սէն Մարք» տարրաբաժարան:
- Ստացէ՛ք 50% գեղչը անմիջապէս:

Առաջնահերթութիւն տուլ՛ք ձեր առողջութեան պայօր: Այս բացառիկ առաւելութիւնը հիմա գործող:



Ֆութպոլ

ՍՊԱՆԻԱ՝ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԱՆ

Սպանիա հռչակուեցաւ 2026-ի ՖԻՖԱ-ի Աշխարհի ախոյան՝ եզրափակիչ մրցումին երկարաձգուած ժամանակահատուածի ընթացքին 1-0 արդիւնքով յաղթահարելով գործող ախոյան Արժանքինը:



Ֆերրան Թորես դարձաւ հանդիպման հերոսը՝ 106-րդ վայրկեանին խփելով վճռական կոլը եւ Սպանիոյ ապահովելով Աշխարհի բաժակի իր երկրորդ տիտղոսը:

Երրորդ տեղի մրցումին, Անգլիա նուաճեց պրոնգէ մետալը՝ 6-4 արդիւնքով յաղթանակ մը արձանագրելով Ֆրանսայի դէմ:

Անհատական մրցանակներու բաժինին մէջ, Սպանիոյ միջնապահ Ռոտրին արժանացաւ «Ոսկէ գունդ»-ին՝ որպէս մրցաշարքի լաւագոյն ֆութպոլիստ, մինչ դարպասապահ Ունայ Սիմոն շահեցաւ «Ոսկէ ձեռնոց»-ը՝ լաւագոյն դարպասապահի համար: Երիտասարդ պաշտպան Փաու Զուարսի հռչակուեցաւ «Լաւագոյն երիտասարդ ֆութպոլիստ»: Իսկ «Ոսկէ կօշիկ»-ը բաժին հասաւ Ֆրանսայի աստղ Զիլիան Սպաքէին, որ մրցաշարքը աւարտեց 10 կոլով՝ դառնալով գլխաւոր ռմբարկուն:

ԼԻԲԱՆԱՆ ԱՊԱՀՈՎԵՅ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՍԻՈՅ «Մ-17» ԿԱՆԱՆՑ ԱԽՈՅԱՆՈՒԹԵԱՆ ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿԻՉԻ ՏՈՄՍԸ

Լիբանանի «Մ-17» կանանց ազգային հաւաքականը ապահովեց իր տեղը 2026-ի Արեւմտեան Ասիոյ ախոյանութեան կիսաեզրափակիչ փուլին, Յորդանանի Չարքա քաղաքին մէջ, արձանագրելով երկու յաղթանակ՝ Արաբա-



կան Միացեալ Էմիրութիւններուն դէմ 8-0, եւ Սեուտական Արաբիոյ դէմ 2-0 արդիւնքներով, շարունակելով իրենց յաջող ընթացքը տարածաշրջանային մրցաշարքին մէջ:

Լիբանան այժմ պիտի մրցի Սուրիոյ դէմ՝ Ա. խմբակի վերջին հանդիպումին, որ տեղի պիտի ունենայ այսօ՝ Երեքշաբթի, 21 Յուլիսին, Չարքայի Փրինս Սոհամմատ

ՎԻՐԱԴՈՐ ԿՂԶԻՆ

Շարունակուած էջ 2-էն

Եւ ահա անուն մը, որ կը պարտադրէ կանգնիլ պահ մը. **Բարսեղ Պիպերեան:**

«Էփեմ, օ Բարսեխ Պիպերեան»... ինկաւ Բարսեղ Պիպերեանը, 16 Օգոստոս 1974-ին, Նիկոսիոյ մատուցներուն թրքական Ներխուժող ուժերուն դէմ բախումներու ընթացքին: Յունահայ հայորդին հերոսաբար ինկաւ քաղաքացիական եւ զինուորական պարտականութեան ժամանակ՝ իր արիւնը շաղխելով Կիպրոսի բազմաշարքար հողին:

Ամէն 20 Յուլիսի առաւօտ, տխրաթախիծ շղարշ մը կը պարուրէ Կիպրոսի յունական բաժինը: Պատանդուած զինուորներուն յիշատակը տխրօրէն կը համակէ քաղաքացիները, որոնք դեռեւս կը կրեն սպիւները Եճէիտներու, Տէփ-րէլներու, Տէքթաշներու եաթաղանի հարուածներուն: Եւ որոնց ստորին գործը կը շարունակէ թուրքիոյ մերօրեայ նախագահն ու Կիպրոսի գրաւեալ թրքական բաժնին դրածոյ «նախագահ»ը:

20 Յուլիսը արդէն աւանդութիւն դարձաւ Զնչակեան կուսակցութեան Կիպրոսի անդամներուն համար, այցելելու թիմվոյի յուշաբլուր, ծաղկեպսակ գետեղելու եւ խոնարհելու նահատակներու յիշատակին առջեւ: Եղբայրական եւ բախտակից ժողովուրդներու համար նման քայլեր առաւել կ'ամրապնդեն յարգանքն ու վստահութիւնը իրարու հանդէպ: Թուրքին մշտագոյ եաթաղանը դրդապատճառը պիտի ըլլայ այդ եաթաղանով իրաւագրկուած եւ հալածեալ ժողովուրդներուն համագործակցութեան եւ լիովին փոխմըընման, փոխգորակցութեան ու փոխնեցունկին համար:

մարզադաշտին վրայ: Այս հանդիպումը պիտի որոշէ խմբային դասաւորման վերջնական պատկերը:

«Ֆորմիւլա 1»

ՔԻՄԻ ԱՆԹՈՆԵԼԼԻ՝ ՊԵԼՃԻՔԱՅԻ ԿՐԱՆ ՓՐԻԻ ԱԽՈՅԱՆ

Քիմի Անթոնելլի դարձեալ տիրական ելոյթ մը ունեցաւ Սիւա-Ֆրանքորշամփի մէջ, յաղթելով 2026-ի Պելճիքայի Կրան փրիին եւ աւելի ընդլայնելով իր առաջատարութիւնը «Ֆորմիւլա 1»-ի վարորդներու ախոյանութեան մէջ: «Մեր-սետս»-ի վարորդը աւարտեց մրցավազը «Ֆերրարի»-ի Շառլ Լըքլերի (2-րդ) եւ «Ռեա Պոլ»-ի Մաքս Վերսթափենի (3-րդ) նկատմամբ առաւելութիւն արձանագրելով, ապահովելով մրցաշրջանի իր վեցերորդ յաղթանակը:



Տասը մրցումներէ ետք, Անթոնելլի կը գլխաւորէ վարորդներու ցուցակը՝ 204 կետով, առաջ անցնելով Լուիս Յեմիլթոնէն (159 կետ) եւ Ճորճ Ռասըլէն (154 կետ): «Մերսետս» նաեւ ամրապնդեց իր դիրքը շինարարներու (Constructor) դասաւորման մէջ՝ 358 կետով նշանակալի առաւելութիւն մը ստեղծելով «Ֆերրարի»-ի նկատմամբ, որ ունի 285 կետ:

Պասքեթպոլ

«ՍԱԺԵՍ» ԵՒ «ՌԻԱՏԻ»՝ ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ԱԽՈՅԱՆՈՒԹԵԱՆ ԵԶՐԱՓԱԿԻՉԻՆ

2025-26-ի Decathlon Լիբանանի պասքեթպոլի ախոյանութեան եզրափակիչը պատրաստ է, ուր երկու աւանդական մրցակիցներ՝ «Սաժես» եւ «Ռիատի», հասան վերջին փուլ: «Սաժես» ապահովեց իր տեղը եզրափակիչին՝ յաղթահարելով «Սանթրալ Շուի»-ին, մինչդեռ «Ռիատի» դուրս ձգեց «Ալթոնայն»-ը եւ ապահովեց իր մասնակցութիւնը ախոյանութեան վճռական պայքարին:

Երկու ակումբները այժմ պիտի մրցին լիբանանեան ախոյանութեան թագին համար հերթական մեծ մրցակցութեամբ, ընդհանուր 7 մրցումէ 4-ը յաղթելու համար, Գորեքշաբթի, 22 Յուլիս 2026-էն սկսեալ:

Պատրաստեց՝ ՄՈՒՐԱՏ Մ.

«ԱՄԱՌ-ԱՌԱՆՑ ԱՅԳԱԲԱՅԻ»

Շարունակուած էջ 2-էն

գաղթականները քարայրի մը մէջ կը թիւմեն: Մարոյի մայրը՝ Ազնիւ շատ հիւանդ էր: Մարօ ոստիկանապետին դիմելու գաղափարը կը յղանայ: Ան կը տեսակցի Ռիզա պէյի հետ, որ Վարդանը կը ճանչնար եւ աչք ուներ Մարոյի վրայ: Զարանձակն մէջ Ազնիւ կը մահանայ: Ռիզա պէյ Մարօն եւ թովմասը իր պաշտպանութեան տակ կ'առնէ:

Վարդան Պալեան բարեկամ զինուորականներու միջնորդութեամբ կախաղանէ կ'ազատի եւ բանտէն կ'արձակուի: Երկար փնտռուքներէ ետք, աի Մարօն եւ թովմասը կը գտնէ ու զինադադարէն ետք անոնք Ա.Մ.Ն. կը մեկնին, Նոր Կէանք մը սկսելով:

Ղեղիւնակները իրական կեանքէ առնուած արժեքաւոր վկայութիւն մը վիպագրած են, որ գրուած է յստակ ու հաղորդական ոճով եւ միեւնոյն ժամանակ մեզի կը հայթայթէ պատմավաւերագրական հագուազիւտ ու մանրամասն տուեալներ: Յոն կը գտնենք սեր, ատելութիւն, վրէժ, զինեալ պայքար, նահատակութիւն, պատերազմ, խաղաղութիւն եւ, վերջապէս, վերապրում ու կեանք: Արժեքաւոր գործ մըն է այս գիրքը:

(Վերջ)



Այս դժուար պահերուն, մեր Դարմանատունը կը շարունակէ կարիքաւորին կողքին կանգնիլ: Այսօր մենք ձեր աջակցութեան պէտք ունինք՝ մեր առաքելութիւնը շարունակելու համար:

Կրնաք նուիրատուութիւն կատարել Whish հաշիւով եւ օգնել մեզի որպէսզի շարունակենք խնամք եւ անհրաժեշտ ծառայութիւնները մատուցելու մեր գաղութին:

Իրաքանչիւր ներդրում, ինչքան ալ փոքր ըլլայ, նպատակն կը ծառայէ:

Միասին կրնանք յոյսը վառ պահել:

whish MONEY 71/356035

Շնորհակալութիւն Ձեր ազ նուրբան եւ օժանդակութեան համար:
Միասին անկի գորտար ենք:

Հ.Կ.Բ.Մ. ԴԱՐՄԱՆԱՏՈՒՆ ԸՆԿ. ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Դարմանատուն բաց է ամէն օր ստատուան ժամը 9:00-էն մինչեւ կէսօր, ետք ժամը 3:00 քաջ Կիւրակի օրերէն:

Ձեր ուշադրութեան կը յանձնենք նաեւ թէ դեղատանք բաց է նաեւ նոյն ժամերուն:

Երկուշաբթի	- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ - Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ
Երեքշաբթի	- Բժշ. Քրիս Զարպէտեան - Ատամնաբոյժ - Բժշ. Ռաֆֆի Փօլատեան - Գեղձային հիւանդութիւններ - Բժշ. Արթուր Յոլլայ - Ակնաբոյժ - Կարօ Ասետեան - Ֆիզիքական բուժում - Բժշ. Մարալ Պոլեանեան - Հոգեբան
Գորեքշաբթի	- Բժշ. Յարութ Տէմիրճեան - Ոսկրաբոյժ - Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ - Մարիլին Աուն - Սննդաբան
Հինգշաբթի	- Բժշ. Քրիս Զարպէտեան - Ատամնաբոյժ - Կարօ Ասետեան - Ֆիզիքական բուժում - Բժշ. Իրինա Արբանեան - Ծնողաբերութեան եւ կանանց հիւանդութիւններ - Բժշ. Միսակ Արբանեան - Վիրաբոյժ - Բժշ. Մարալ Պոլեանեան - Հոգեբան
Ուրբաթ	- Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ - Բժշ. Անի Երկանեան - Մանկաբոյժ - Բժշ. Միսակ Արբանեան - Սրտաբան
Շաբաթ	- Բժշ. Միքայէլ Խօնէյաթ - Քիւր, կոլորիտ, ակնայ - Բժշ. Էլի-Թօնի Բօրպանի - Ընդհանուր բժշկութիւն - Բժշ. Քրիս Զարպէտեան - Ատամնաբոյժ - Բժշ. Յակոբ Գլընճեան - Ատամնաբոյժ

@aebu.org @aebumedicosocialcenter 01 560 704 / 71 356 035

ՎԱՐԴԱՎԱՌԻ ԳՐԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ

Տօններ, հաղթանք, Վայելներ

Կիրակի 30 ՅՈՒՆԻՍ 26 2026

10:00-էն սկսեալ

Մար Միւայել Նոր Զանքն փողոց Զովաւատոր

almaza

Օճառով ֆուրսով

Հաճով ուտելիքներ

Տարբեր խաղեր

Ժամանցային խաղեր

Կրպակներ եւ աւելին

Օճառով ֆուրսով

Հաճով ուտելիքներ

Տարբեր խաղեր

Ժամանցային խաղեր

Տփնել երաժշտութիւն

Կրպակներ եւ աւելին

Մուտքը անվճար է

Ժամը 10:00-էն սկսեալ

Մանրամասնութեան համար 76 587 256

Կը տեղեկացնենք որ **Հոգեբան Գոհար Պալեքճեան** ձեզ կ'ընդունի ամէն **Երեքշաբթի** ժամադրութեամբ:

We inform you that the Psychologist Kohar Balekdjian will be available every Tuesday by appointment.

نود اعلامكم بأن أخصائي نفسي كوهار باليكجيان يستقبلكم كل يوم الثلاثاء بموجب موعد مسبق.

CONTACT US

Պէրոս, Նոր Հաճն, Ա. Գեղրք Եկեղեցի
بيروت، شارع أرمينيا، نور هاجين، كنيسة مار جرجس للأرمن الكاثوليك
01/560704 - 71/356035

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradater@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أرمنية
تصدر عن شركة ماسيس المجلة والشر (ش.م.م.)